

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1990 թ. Նոյեմբերին լրացաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ նշանաւոր գործիչ, յայտնի գիտնական աստուածաբան պատմաբան եւ քանասէր Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչեանի մահուան 75 ամեակը: Մակար կաթողիկոսի խօսքերով ասած, «նա նշանակալից աւանդ է ներդրել Հայաստանի եկեղեցւոյ լուսաւորութեան նոր դարում»:

Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչեանը ծնուել է 1866 թ. Մարտի 17ին Նրեւանի Նահանգի Գողթան գաւառի Ցղնայ բնակավայրում (ներկայումս՝ Նախիջեւանի Զանաճար գիւղը), սովորել է տեղի ծխական դպրոցում, այնուհետեւ՝ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում:

1889թ. Կարապետ սարկաւազը իր ընկերոջ՝ Գեորգ Զորբէջեանի հետ (հետագային Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ., ուղարկուում է Գերմանիա՝ աստուածաբանական կրթութիւնը շարունակելու: «Պալիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ եւ նրանց ցեղակից աղանդաւորական երեւոյթները Հայաստանում» աշխատութեան համար Կարապետ սարկաւազին շնորհուում է փիլիսոփայութեան դոկտորի աստիճան: «Այդ աշխատանքը» գրել է ակադեմիկոս Ն. Մառը) հռչակուում է հեղինակի անունը գիտական այն շրջանակներում, որոնք հետաքրքրուում էին միջնադարեան աղանդների պատմութեամբ եւ մասնաւորապէս հայկական աղբիւրներով: Այս տեսանկիւնից նրա գիրքը համարուում է անփոխարինելի»: Իր աւարտագրի պաշտպանութիւնից յետոյ Կարապետ սարկաւազը շարունակուում է գիտական հետազոտութիւնները Փարիզի, Լոնդոնի, Մարբուրգի, Վենետիկի, Կոստանդնուպոլսի գիտական կենտրոններում: Ականաւոր, գիտնական աստուածաբանի գրչին են պատկանում գերմաներէնով եւ հայերէնով գրուած 12 աշխատութիւն եւ անլի բան 150 յօդուած, որոնք նուիրուած են քրիստոնէութեան եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատմութեանը, ինչպէս նաեւ մի շարք դաւանաբանական հիմնահարցերի: Հենց նրան է պատկանում, Բաբգէն եւ Ներսէս Բ. կաթողիկոսներին վերաբերուող (Զ. դար) «Գիրք քղթոց»ի հետագայում ակադեմիկոս Ն. Մառի կողմից ռուսերէն թարգմանուած «Յովհաննէսի Ճանապարհորդութիւնը Հաբեշտան», հին հայկական ձեռագիր յուշարձանի եւ, «Գիրք առակաց»ի յայտնագործման եւ ուսումնասիրման պատիւը: Առաջին անգամ՝ նա է յայտնաբերել եւ հրատարակել Ս. Իրենիոս (Նրանոս) Լիոնացու «Ցոյցք առաքելական փարոգութեան» երկը զուգադիր բնագրերով: 1907 թ. այդ աշխատութիւնը յայտնի էր սոսկ եկեղեցական պատմիչ Նսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւնից»:

1908 թ. Հայր Կարապետը լոյս է ընծայում իր տփնաջան աշխատանքի արդիւնքը հանդիսացող «Հայ եկեղեցւոյ պատմութիւն» աշխատութեան առաջին մասը: Նոյն թուին Նրուանդ Վրդ. Տեր-Միսնսեանցի հետ համատեղ նա հրատարակում է «Հակահա-ռութիւն Տիմոթէոս Կուզի» բանավիճային աշխատութիւնը իր մեկնաբանութիւններով: Այս աշխատութիւնը յայտնի էր միայն հայերէն թարգմանութեամբ եւ հետաքրքրութիւն էր ներկայացնում ոչ միայն միաբնակ աստուածաբանական մտքի, այլ նաեւ հայ գրականութիւնը ուսումնասիրողների համար: Կարապետ Եպիսկոպոսի կարեւոր աշխատութիւններից է հանդիսանում նաեւ 1914թ. լոյս տեսած հատորը ընդարձակ գիտական մեկնաբանութիւններով:

Կարապետ Եպիսկոպոսը անգնահատելի աւանդ է մուծել Հայ եկեղեցու քարեփոխութիւնների նախանշման և իրականացման քննադատում: Իր քաղաքական, յօդուածներում նա հանդէս էր գալիս որպէս լուսաւորութեան նախանձախնդիր, կոչ էր անում եկեղեցու կազմակերպչական կատարելագործմանը, հոգեւորականութեան մշակութային և կրթական մակարդակի բարձրացմանը: Այս հարցերի վերաբերեալ իր նկատառումները Կարապետ Եպիսկոպոսը մասնաւորապէս շարադրել է իր կողմից 1907 թ. Բաբուում հրատարակած «Ժողովրդական եկեղեցի» հայերէն գրքոյկի մէջ: 1899-1909 թթ. լինելով Ս. Էջմիածնի հոգեւոր ձեռնարանի տեսուչը, Հայր Կարապետ ուսումնական ծրագրի մէջ մտցրել էր նոր առարկաներ՝ Ընդհանուր և Հայ Հոգեւոր Իրաւունք, Հին և Նոր Փիլիսոփայութեան Պատմութիւն, Համեմատական Լեզուաբանութիւն, Երաժշտութեան Տեսութիւն և Պատմութիւն:

Լինելով տաղանդաւոր քարոզիչ, մանկավարժ և գիտնական, Հայր Կարապետը վայելում էր համընդհանուր ճանաչում, յարգանք և սէր: 1903-1909 թթ. գտնուելով Երեսնի, իսկ 1909-1911 թթ.՝ Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտօնում, նա այցելում էր իր թեմի ամենահեռաւոր ծայրագաւառները, ծանօթանում էր ժողովուրդի հոգեւոր և մշակութային կեանքին, իր հոգեւոր զաւակներին ցոյց էր տալիս հնարաւոր օգնութիւն: 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Կարապետ Սրբազանը Մահմեդական առաջնորդի հետ միասին այցելում էր առնականման վայրերը և իր խօսքի ու հեղինակութեան ուժով խաղաղեցնում էր թշնամի կողմերին: Հաշուի առնելով Կարապետ Սրբազանի ակնառու խաղաղասիրական գործունէութիւնը ուսական կառավարութիւնը 1910թ. նրան պարգեւատրել է Ս. Աննայի երկրորդ կարգի շքանշանով:

Կարապետ Եպիսկոպոս Տէր-Մկրտչեանի ծառայութիւնները եկեղեցական, գիտական և հասարակական քննադատներում ըստ արժանւոյն են գնահատուել մեր ժամանակիցների կողմից, ինչպէս՝ Գերմանացի յայտնի գիտնական և աստուածաբան, պրոֆեսոր Հերման Հոյց, պրոֆ. Ֆրիդրիխ Հայներ, պրոֆեսոր Սաբինա Շտեֆան: Եպիսկոպոսի կեանքի և գործունէութեան մասին գրուել են շատ գրքեր:

Կարապետ Եպիսկոպոս Տէր-Մկրտչեանը մահացել է 1915թ. Նոյեմբեր 19-ին Բաբուում և թաղուած է տեղի հայկական եկեղեցու մօտ:

Լորետա-Տէր-Մկրտչեան

Պատմ. գիտութիւնների թեկնածու. Մոսկուա

Քարգմանուած է Մոսկուայի

«Հայկական Լրաբեր» Նոյեմբեր 1990 ամսաթերթից